ՍԱ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՉԷ, ԱՅԼ՝ ՀԱՇՎԵՀԱՐԴԱՐ էջ 6

Հմ 119 (4003)
18 ՆՈՅԵՄԲԵՐ 2025
ԵՐԵՔՇԱԲԹԻ
Լույսընծայման օրերը՝ երեքշաբթի, չորեքշաբթի, ուրբաթ
Գինը՝ 100 Դ

ԻՐԱԿՈՒՆՔ

ընթերցողի հետ 35 տարի

Լույս է տեսնում 1989թ.

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ 2026-ԻՆ ԿԻՆՈՅՈՒՄ էջ 7

ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

ՆԻԿՈԼ		ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆ
9	16 - 11 - 25	1

ՆԻԿՈԼԻ ԳՈԼԸ ՉԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆԸ

Ֆուտբոլի 2026 թվականի Աշխարհի առաջնության որակավորման փուլում Հայաստանի հավաքականը հայտնվեց Պորտուգալիայի հետ նույն խաղադաշտում եւ խայտառակ իրավիճակում:

Պորտուգալացիները հենց 7-րդ րոպեին, բացեցին հաշիվը, սակայն մեր հավաքականի ավագ էդուարդ Սպերցյանը չուշացավ՝ հավասարեցնելով հաշիվը: Սկսվեց առաջին խաղակեսի գոլառատ շքերթը. պորտուգալացիները մի քանի անգամ գերազանցեցին մեր դարպասապահներին, իսկ առաջին կեսի ավելացված ժամանակում Հայաստանի դարպասին նշանակվեց 11 մետրանոց հարված: Արդյունքում առաջին խաղակեսն ավարտվեց 5:1 հաշվով՝ խոշոր առավելությամբ Պորտուգալիայի օգտին: Երկրորդ խաղակեսն էլ ավելի ողբերգա-

ԻՐԱՎԱՍՏԱՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՄՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ԿԱՐԵՎՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ

Հայաստանում գործազրկության մակարդակը 2024–2025 թթ. ընթացքում նվազել է, ինչը, ըստ Վիճակագրական կոմիտեի, պայմանավորված է ծառայությունների ոլորտի ակտիվացմամբ: Աճի հիմնական շարժիչներից մեկը Ռուսաստանի զբոսաշրջիկների հոսքն է Հայաստանը 2025-ին ընդունել է մոտ 1 միլիոն ռուս զբոսաշրջիկ, ինչը նպաստել է ՀՀ-ում հազարավոր աշխատատեղերի ստեղծմանը՝ հյուրանոցային-ռեստորանային ոլորտում, առեւտրում եւ ծառայություններում: Ըստ տվյալների՝ Ռուսաստանի աշխատաշուկան նույնպես վճռական դեր ունի հազարավոր հայ շինարարներ, վարորդներ եւ սեզոնային աշխատողներ աշխատում են Ռուսաստանում՝ ապահովելով իրենց ընտանիքների եկամուտները հայրենիքում:

Ռուսաստանից ստացվող 3.8 միլիարդ դոլարից ավելի դրամական փոխանցումները շարունակում են մնալ տնտեսական հենասյուն՝ կազմելով արտերկրից եկող բոլոր մուտքերի շուրջ 60%-ը: Հայաստանի բնակչության մինչեւ 15%-ը կախված է հենց այս փոխանցումներից:

Տնտեսագետ ՍՈՒՐԵՆ ՊԱՐՍՅԱՆԻ գնահատմամբ՝ ՀՀ-ում գործազրկության նվազումը մեծապես պայմանավորված է ռուսական շուկայի եւ զբոսաշրջության ազդեցությամբ.

- Ռուսաստանից եկող գումարի ծավալը մեծացել է, դա պայմանավորված է ռուս ռելոկանտներով, որոնք մեծ թվով գումարներ են փոխանցում ՀՀ: Ժամանակին, երբ «Միր» քարտերը գործում էին, տարեկան մոտավոր 400 մլն դոլարի չափով գնումներ էին անում ՀՀ-ում: Հիմա էլի ռուսական քարտերի գործածությունն ուզում են վերականգնել ՀՀ-ում, ինչը կարող է խթանել, որ էլի գումարներ գան: Ռուսաստանը շարունակում է մնալ Հայաստանի համար կարեւոր տնտեսական գործընկեր՝ ապահովելով աշխատանք, ֆինանսական հոսքեր եւ ծառայությունների սպառման լայն շուկա:

ԻԼՈՆԱ ԱԶԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՄԵԿ ՍԽԱԼ ՄԻԱՑՈՒՄԸ ԿԱՐՈՂ Է ՀԱՆԳԵՑՆԵԼ ԴՐԱՄԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ

Տեղեկատվական անվտանգության հայտնի փորձագետ ԱՐՍԵՆ ԼԵՎՈՆՅԱՆԸ ուշագրավ փաստի մասին է պատմել՝ մասնավորապես նկատելով.

– Վերջին տարիներին բազմաթիվ հասարակական վայրերում՝ սրճարաններում, այգիներում, կանգառներում, մեծ առեւտրի կենտրոններում եւ նույնիսկ փողոցներում, կարելի է հանդիպել անվճար Wi-Fi-ի: Շատերը ուրախությամբ միանում են նման ցանցերին՝ մտածելով, որ սա հարմար միջոց է ինտերնետին մուտք գործելու համար: Սակայն այս «հարմարությունն» ունի մի շատ լուրջ հակառակ կողմ՝. անվճար Wi-Fi-ը հաճախ դառնում է իրական կիբերանվտանգության խնդիր:

Շատ դեպքերում նման ցանցերը տեղադրվում են ոչ թե մարդկանց օգնելու, այլ տվյալներին հասանելիություն ստանալու նպատակով: Հարձակվողները կարող են ստեղծել Wi-Fi ցանցեր հայտնի անուններով կամ վստահություն առաջացնող անվանումներով, որպեսզի մարդիկ հանգիստ միանան դրանց: Երբ օգտատերը միանում է այսպիսի ցանցի, իր սարքը կարող է դառնալ խոցելի առանց որեւէ զգուշացման կամ նախազգուշացման: Այդ պահից սկսած սարքում հայտնված ցանկացած տվյալ՝ գաղտնաբառ, բանկային քարտի տվյալ, անձնական նամակագրություն կամ սոցիալական ցանցերի մուտքային տվյալներ, կարող են դառնալ հասանելի չարագործներին:

Ավելին, որոշ դեպքերում հարձակվողները կարող են ոչ միայն տվյալներ գողանալ, այլեւ վերահսկել սարքը, գրանցել ձեր գործողությունները, տեսնել մուտք գործող էջերը, կամ ուղղորդել ձեզ դեպի կեղծ կայքեր՝ կարծես թե դրանք իրական են: Մարդը համարյա չի էլ նկատում, որ արդեն վտանգված է, քանի որ ամեն ինչ արտաքինից թվում է սովորական եւ աննկատ:

Անվտանգության լավագույն խորհուրդը պարզ է. եթե վստահ չեք Wi-Fi ցանցի աղբյուրին եւ դրա օրինականությանը, ավելի լավ է չմիանալ: Շատ ավելի ապահով է օգտագործել ձեր բջջային ինտերնետը կամ, անհրաժեշտության դեպքում, VPN ծառայություն: Հանրային Wi-Fi-ը կարող է հարմար թվալ, բայց անվտանգությունը միշտ պետք է լինի առաջնային՝ մեկ սխալ միացումը կարող է հանգեցնել դրամական կորուստների, անձնական տվյալների արտահոսքի եւ այլ լուրջ հետեւանքների:

ԻԼՈՆԱ ԱԶԱՐՅԱՆ

AEB ARMECONOMBANK ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Գլխամասային գրասենյակ
ՀՀ, ք. Երեւան, 0002,
Ամիրյան 23/1
aeb.am 86 86

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ «ՌՈՍԻԱ-1» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ս. թ. նոյեմբերի 21-ից «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն դադարեցնելու է ՀՀ, 0018, ք. Երևան, Տիգրան Մեծի պող. 16/4 հասցեում գործող «Ռոսիա-1» մասնաճյուղի գործունեությունը:

«Ռոսիա-1» մասնաճյուղի հաճախորդները կարող են շարունակել սպասարկվել «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ «Ռոսիա» մասնաճյուղում (հասցե՝ ՀՀ, 0010, ք.Երևան, Տիգրան Մեծ պող. 16), ինչպես նաև Բանկի ցանկացած այլ մասնաճյուղում:

Միաժամանակ հայտնում ենք, որ գրեթե բոլոր բանկային գործարքները հնարավոր է կատարել AEB Mobile հավելվածով և/կամ վճարային տերմինալներով:

Հանձնվել է տպագրության՝ 14.11.2025թ.